Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-117[2]-13.12.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 3.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝ հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից հիմնադրամին տրամադրված միջոցների չափին համապատասխան, սակայն ոչ ավելի, քան նվիրաբերած գումարը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 3.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝ հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից հիմնադրամին տրամադրված միջոցների չափին համապատասխան, սակայն ոչ ավելի, քան նվիրաբերած գումարը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ~~Կ~~Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:»:

Հոդված 3~~2~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-117-13.12.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի	«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Կուսակցությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում առաջարկում ենք բացառել «ՀՀ» հապավման կիրառումը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածներով նախատեսված փոփոխություններին:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են փոփոխություն:	Ընդունվել է:

		նախագծի 1-ին հոդված			
2.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում հղում է կատարվում Օրենսգրքին: Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին հղում կատարելիս գրել կրճատ անվանումը կամ առաջին իսկ կիրառումից հետո սահմանել կրճատ տարբերակ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
3.	*ՀՀ կառավարություն*	«Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ նկարագրված խնդրի լուծման նպատակով նպատակահարմար է նույնական փոփոխություն կատարել նաև «Հիմնադրամների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3.1-ին մասում:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
4.	*ՀՀ կառավարություն*	«Գործատուների միությունների մասին» օրենք	Նախագծերի փաթեթի ընդունմամբ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել «Գործատուների միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասում:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն: Նախագծով առաջարկվել է «Գործատուների միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Գործատուների միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության:»:	Ընդունվել է: